

Վ Ա Տ Ա Ս Ե Ռ Մ Ա Ն Հ Ա Ր Ց Ի Ա Ռ Թ Ի Ի

Մեր մամուլի մէջ վերջերումս արծարծուած վատասեւման հարցի առթիւ*) կամենում ենք դարձնել հետաքրքրողների ուշադրութիւնը և հետեւալ պատճառների վրայ.

1) Եթէ համեմատենք մեր հայ ազգաբնակչութիւնը իր հետ ապրող ուսանների կամ գերմանացիների հետ, իսկոյն աչքի կ'ընկնի մերոնց թէ փոքրահասակ, թէ գունատ և թէ սակաւարիւն լինելը: Հայերիս թոյլ կազմուածքը աւելի ակնյայտնի երևում է զինուորագրութեան ժամանակ, երբ հարկաւորւում է ընտրել առողջ կազմուածք ունեցողներին: Մահմեդականների մէջ պարթև հասակ, զեղեցիկ տիպեր պատահում են ազնուական դասակարգի մէջ, որ մեր կարծիքով հետեւանք է թէ սեռական ընտրութեան և թէ լաւ ապրուստի:

2) Գալով իգական սեռին՝ վերջինս թէ թուով սակաւ է արուններից, մինչ լուսւորեալ երկրներում ընդհակառակն է լինում, թէ աւելի թոյլակազմ է ու նիհար և թէ շատ փոքրահասակ ու միանգամայն թառամած: Գիւղական կանանց մէջ աւելի է տարածուած թէ մահ, թէ զանազան հիւանդութիւններ, որոնց մեծ մասը հետեւանք է ծննդաբերութեան և տների խոնաւ հակառողջապահական պայմանների:

3) Երեխաները ըստ մեծի մասին նիհար են, թուլակազմ, ցուրտ ժամանակներին կապտած, որոնք տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ մահացութեան մեծ տոկոս են տալիս: Մեր գիւղերում բաւական շատ են զոյգեր առանց երեխաների և այդ ևս գլխաւորապէս կանանց հիւանդութիւնների պատճառով:

4) Մինչ զեռ ուս կամ գերմանացի դաղթականների գիւղերը շինուած են առողջարար տեղերում և որոշ պլանով, լայն փողոցներով և յարմար գետնավեր շինութիւններով, բաղկացած երկու կամ աւելի սենեակներից, մերոնց գիւղերն ընդհակառակը

*) Տե՛ս, ի միջի ալլոց, „Մշակ“ № 32. Տիկին Ս. Գանիկէլսկեանի լոյրածը:

ներկայացնում են միմեանց վրայ կուտակած գեանափոր տներ, նեղ փողոցներով: Այդ որջերը չունեն լուսամուտներ և ծխով միշտ լի են լինում:

Ռուսների մօտ ամեն գիւղում կան բաղանիքներ՝ թէ՛ բնդհանուր և թէ՛ մասնաւոր, տնային, իսկ մեր գիւղերում ամենեւին: Կարելի է գտնել հայ գիւղացիներ, որոնք տարիներով չեն լողացած, մինչդեռ մալականները ամեն չաբաթ բաղանիքներ են գնում:

5) Հագուստի կողմից՝ միևնոյն անհոգութիւնը, անմաքրութիւնն ու անյարմարութիւնը, մանաւանդ կանանց հագուստի նըկատմամբ: Մերոնք միևնոյն հագուստն են գործադրում թէ՛ ձմեռ և թէ՛ ամառ: Ձմեռ ժամանակ լը տեսնէք հայ գիւղացիներին ցրաից դողալիս, կուշ եկած: Կերակուրի մասին ևս մեր գիւղացին հոգ չէ տանում, շատ սակաւ են կերակուր եփում, թէյ խմում: Մսի համ միայն հարսանիքների և թաղումների ժամանակ են տեսնում: Կերակուրը գլխաւորապէս հացն է թէ՛ մեծերի և թէ՛ փոքրերի համար. և այլն էլ ոչ թէ ցորենի, այլ շատ անգամ դարու կամ կորեկի, իսկ գեանախնձոր, կամ ուրիշ բուսեղէն՝ լօբի, բակլայ և այլն, շատ պակաս են լինում և առնովի, ուրեմն և մեծամասնութեան համար անմատչելի: Հետեապէս մեր գիւղացիների թէ՛ բնակարանը, թէ՛ հագուստը, թէ՛ սնունդը վերին աստիճանի անբաւարար է և հակառուողապահակման:

6) Այժմ դառնանք մասնաւորապէս այն պայմաններին, որոնք աւելի ևս վատթարացնում են մեր գիւղացիների կենսութեանը, այսինքն՝ նպաստում են վատասեռման:

Շատերին յայտնի է, որ մեր գիւղերում ամենապիտասակար սովորութիւն կայ, այն է՝ աղջիկներին վաղաժամ ամուսնացնում են՝ սկսած 12 տարեկան հասակից: Բայց այդ խնդրի մասին մանրամասն խօսել է արդէն բժ. Վ. Արծրունին «Մուրճի» ներկայ տարուայ համարներում տպուած «Ամուսնութիւն» յօդուածում: Ցանկալի էր այդ յօդուածները տեսնել տպուած առանձին գրքովի և տարածուած ժողովրդի մէջ:

7) Գալով քաղաքներում ապրող հայերին, պիտի ասենք որ այդտեղ ևս կան վատասեռման պատճառներ: Այժմ քաղաքներում, ինչպէս յայտնի է, պսակը դարձել է մի տեսակ առևտուր. ո՛վ ունի լաւ օփա, նա կարող է մարդու գնալ, իսկ ո՛վ դուրկ է օփաից, թէև առողջ է, գեղեցիկ և խելօք, նա ըստ մեծի մասին մնում է տանը: Յայտնի բան է որ այդպիսի պայմաններում սպասել առողջ և գեղեցիկ սերունդ, անկարելի է, և այդ է պատճառը, որ մեր հարուստ ու ինտելիգենտ դասակարգի մէջ գեղեցիկ և առողջ սերունդ քիչ կարելի է գտնել: Առողջ ու գեղեցիկ

սերունդ աւելի գտնուում է միջին դասակարգում, ուր պսակ-
ուողների ընտրութիւնը այն աստիճան դրամական հաշուով չէ
լինում, ինչպէս աւելի ունեւոր դասակարգում:

Պէտք է այստեղ կցել մի քանի խօսք ևս զինուորագրու-
թեան ազդեցութեան մասին: Դժբախտաբար, մեր զինուորներից
չատերը վերադառնում են տուն հիւանդացած վննեքական
ախտով և պատճառ դառնում այդ վատ ցաւի տարածման:

Ահա մեր ցեղի թէ՛ գեղեցկութեան և թէ՛ յաղթանդամու-
թեան արգելառիթ պատճառներից մի քանիսը: Ինչպէս դժուար
չէ եզրակացնել վերև ասածներից, պէտք է աշխատել ամեն կերպ
որ ժողովուրդը լուսաւորուի, հասկանայ իր ցաւերի պատճառ-
ները, բարւոքի իր տնտեսական դրութիւնը, ահա միայն այդ
ժամանակ կարելի կը լինի մեր վատասեռման առաջն առնել:

ԲԺ. Բ. Ա.